

ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԲՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱՂԻՈՐԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱՌՆՎԱԶՆ ՄԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՆԻՔԻ ԵՎ ՄԵՎ ՌԱՂԻՈՍԼԻՔԻ) ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրերի հեռարձակումն իրականացվում է 5 հզոր (1000-5000 Վտ), 37 միջին (100-1000 Վտ) եւ 153 փոքր հզորության (1-100 Վտ) հաղորդակներով եւ վերահաղորդակներով՝ հեռուստաալիքների մետրային եւ դեցիմետրային տիրույթներում:

Ազդանշանի հեռահաղորդումն իրականացվում է՝

57 հեռուստահաղորդակ ազդանշանն ընդունում է 1500 կմ երկարությամբ ռադիոռելեային գծերով,

91 հեռուստակայան ազդանշանն ընդունում է արբանյակից,

46 հեռուստակայանում՝ ազդանշանի եթերային ընդունում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 21-ի թիվ 559 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների ծրագրի համաձայն՝ հանրապետության թվով 67 բարձրլեռնային, սահմանամերձ եւ աշխարհագրական բարդ ռելիեֆ ունեցող բնակավայրերում (մոտ 43000 բնակչությամբ) 2002-2004 թվականներին կազմակերպվել է Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրերի հեռարձակումը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 27-ի թիվ 417 եւ 2001 թվականի մարտի 31-ի թիվ 274 որոշումների համաձայն Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրերի հեռարձակումը 2003 թվականին կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի եւ Սյունիքի մարզերի թվով 6 բնակավայրում:

Ներկայումս Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրերով (թվով 91 գյուղական համայնքներ ընդունում են Հայաստանի հանրային հեռուստատեսության արբանյակային ծրագիրը) հանրապետության համայնքների բնակչության ընդգրկվածությունը կազմում է 100%: Հնարավոր են վատ ընդունման մասնակի դեպքեր՝ կապված բնակչության մոտ ժամանակակից հեռուստացույցների եւ համապատասխան ընդունիչ ալեհավաքների բացակայության հետ:

Սակայն բնակչության ընդգրկվածության դրական ցուցանիշների հետ մեկտեղ չի ապահովվում հեռարձակման բավարար որակ, քանի որ Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրերի հեռուստահաղորդիչ ցանցը 80-85%-ով համալրված է 1970-1980 թվականների արտադրության էներգատար անալոգային սարքավորումներով, որոնց պահեստամասերի եւ լրակազմերի բացակայությունը բարդացնում է շահագործման պայմանները:

Հաշվի առնելով վերոհիշյալը, անհրաժեշտ է մշակել Հայաստանի հանրային հեռուստատեսության ծրագրերի հեռուստահաղորդիչ ցանցի արդիականացման համալիր ծրագիր՝ ռադիոհեռուստատեսային բնագավառում անալոգայինից թվայինի անցնելու նկատառումով:

Հայաստանի հանրային հեռուստատեսության ցանցի ընդհանուր սխեման եւ ընդգրկման գոտիների քարտեզները կցվում են:

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումը ռադիոհաճախությունների գերկարճալիք տիրույթում իրականացվում է 4 հզոր (1000 Վտ), 13 միջին եւ փոքր հզորության (50-1000 Վտ) ժամանակակից տրանզիստորային FM ռադիոհաղորդակներով: Ազդանշանի հեռահաղորդումը կազմակերպվում է մոտ 900 կմ երկարությամբ կապի վերերկրյա ուղիներով:

Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի հաղորդիչ ցանցը գերկարճալիք տիրույթում կազմակերպվել է 2001-2004 թվականների ընթացքում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 12-ի թիվ 636 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների ծրագրի:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի հեռարձակումը կազմակերպելու նպատակով հաղորդակների տեղակայման վայրը եւ ընդգրկման գոտին ընտրվել էր տեսական հաշվարկների հիման վրա, կայանների փորձնական գործարկումից հետո տեսականից առաջացել են ընդգրկման իրական գոտու շեղում: Արդյունքում, Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրով հանրապետության համայնքների եւ բնակչության ընդգրկվածության վերաբերյալ վիճակագրական տվյալները հետեւյալն են`

համայնքներ` մոտ 80%

բնակչություն` մոտ 92%

Հաշվի առնելով վերոհիշյալը, անհրաժեշտ է մշակել Հայաստանի հանրային ռադիոյի ծրագիրը չընդունող բնակավայրում ռադիոծրագրի հեռարձակումն ապահովող միջոցառումների ծրագիր: